

ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆ

(Ծննդյան 100-ամյակի առթիվ)

Կ. Վ. ՄԵԼԻՔ-ՓԱՇԱՅԱՆ

Ականավոր մանկավարժ, հասարակական գործիչ և գիտնական Ստեփան Դանիելի Լիսիցյանը ծնվել է 1865 թ. սեպտեմբերի 22-ին Թիֆլիսում, բժշկի ընտանիքում: 1884 թ. նա փայլուն կերպով ավարտում է Թիֆլիսի առաջին դիմնազիան և հաջորդ տարին ընդունվում Օդեսայի համալսարանի պատմա-



բանասիրական ֆակուլտետ, այնտեղից փոխադրվում է Վարչավայի համալսարան, որը հաջողությամբ ավարտում է 1889 թ.: Նույն տարին նա հրավիրվում է էջմիածնի Գևորգյան ճեմարան ունի դրականություն դասախոսելու: Շուրջ երկու տարի դասավանդելուց հետո կաթողիկոսի հրամանով հեռացվում է աշխատանքից՝ ճեմարանի վարչության դեմ ուսանողական խռովությունների դեկավարելու համար: Փոխադրվելով Թիֆլիս, Ստ. Լիսիցյանն աշ-

խատակցում է «Տարագ» շաբաթաթերթին, իսկ 1892—93 թթ., Տ. Նազարյանի արտասահմանում հղած ժամանակաշրջանում, դառնում է թերթի փաստական խմբագիրը:

1894 թ. Ստ. Լիսիցյանը հրավիրվում է դասախոսելու Ներսիսյան դպրոցում, ուր աշխատում է մինչև 1915 թ., տարբեր ժամանակներում դասավանդելով հայոց պատմություն, ընդհանուր պատմություն, Ռուսաստանի աշխարհագրություն:

Ստ. Լիսիցյանը դեռևս շատ վաղուց փայփայում էր մանկական ամսագիր հրատարակելու միտքը և նախապատրաստական աշխատանքներ էր տանում այդ ուղղությամբ: 1904 թ. նա դիմում է կառավարությանը՝ ամսագիր հրատարակելու թույլտվություն ստանալու համար, բայց քանի որ դեռևս ուսանողական տարիներից նա համարվում էր «անբարենպաստ» և գտնվում էր ոստիկանության հսկողության տակ, մերժում է ստանում: Մեծ դժվարությամբ հաջողվում է «Հասկեր»-ի խմբագիր-հրատարակիչ հաստատել Լիսիցյանի կնոջը՝ Եկատերինա Լիսիցյանին, բայց ամսագրի փաստական խմբագիրը և ոգին Ստ. Լիսիցյանն էր: 1905 թ. սեպտեմբերին լույս է տեսնում «Հասկեր»-ի առաջին համարը, ուր շարադրված է նաև ամսագրի նպատակը. ներշնչել մանուկ ընթերցողներին վսեմ ձգտումներ, պատվաստելով նրանց մեջ սեր դեպի մարդը և դեպի հայրենի միջավայրը, տալ նրանց պարզ հասկացողություններ բնության և մարդու մասին, զարգացնել նրանց մեջ ճաշակ, ուրախություն մտցնել մանկական կյանքի մեջ: Իր առջև դրած խնդիրները «Հասկեր»-ը փայլուն կատարեց:

Ստ. Լիսիցյանին հաջողվում է «Հասկեր»-ի շուրջը համախմբել ժամանակի լավագույն գրողներին, գիտնականներին, կոմպոզիտորներին, նկարիչներին: Ամսագրին աշխատակցում են Հ. Թումանյանը, Ղ. Աղայանը, Ավ. Իսահակյանը, Ալ. Շիրվանզադեն, Հովհ. Հովհաննիսյանը, Վ. Փափազյանը, Ա. Խնկոյանը, Գ. Բաշինջաղյանը, Վ. Սուրենյանցը, Փ. Թերլեմեզյանը, Ե. Թազևիսյանը: «Հասկեր»-ում առաջին անգամ տպագրվել են Հ. Թումանյանի «Գիրորը», «Չարի վերջը», «Գառնիկ ախպերը» և այլ գործեր: «Հասկեր»-ում են տպագրվել Ավ. Իսահակյանի «Ամենահետաքրքրական բանը աշխարհում» և «Արևի մոտ» ստեղծագործությունները:

«Հասկեր»-ում Ստ. Լիսիցյանը հանդես է եկել Սաղալյան, Պ. Ս. Կ., Սրիորդ Միհրուհի ծածկանուններով և գրել է բազմաթիվ պատմվածքներ, պիեսներ, կատարել փոխադրություններ, թարգմանություններ, որոնք մեծ ընդունելություն գտան մանուկների կողմից: Հատկապես մեծ հաջողություն ունեցավ «Հայրենի առասպելներից և վեպերից» հոդվածաշարը, որտեղ հեղինակը մանուկ ընթերցողի մեջ սերմանում է ջերմ հայրենասիրության զգացմունք՝ մեծ հմտությամբ օգտագործելով մեր ժողովրդական բանահյուսության գույարները: «Ալի» պատմվածքը նվիրված է հայ և ադրբեջանական երեխաների բարեկամությանը: «Արու-Հասանի մաշիկները» հեքիաթ-գրույցը ունեցավ մեծ հաջողություն և բազմիցս հրատարակվեց, իսկ «Քաջ ճամփորդները» թարգմանվեց նաև վրացերեն:

Լիսիցյանը մեծ տեղ էր տալիս մանկական պիեսներին: Նա գրում էր. «Ես այն համոզմունքին էի, որ մանկական պիեսը լուրջ մի զվարճալիք չէ, այլ լուրջ դրական գործ, որտեղ պիտի պահպանված լինեն գեղարվեստի բոլոր պահանջները. այնտեղ պիտի որոնենք թե՛ բնագործությունների հավատարիմ ար-

տահայտությունը և թե գործողության զարգացման հոգեբանական ճշմարտությունը»¹։ Մանուկներին թատերական գրականությանը ծանոթացնելու նպատակով նա «Հասկեր»-ին կից հրատարակում է «Մանկական թատրոն» մատենաշարը, ուր տպագրում է «Քաջ զինվորներ»-ը, որը հայ գրականության մեջ առաջին մանկական պիեսն է, Հ. Քուրդյանի հետ համատեղ գրած «Քեռին», ինչպես նաև Սեյրիի «Նոր վարժուհի», «Ես իշխան եմ», Ժ. Մանվելյանի «Փրնթին» և այլն։

1912 թ. Լիսիցյանը հիմնում է «նվեր մանուկներին» ընկերությունը, կազմում է նրա գործունեության ծրագիրը։ Ընկերության նպատակն էր շարունակել «Հասկեր» ամսագիրը, լույս ընծայել հայերեն ինքնուրույն և թարգմանական մանկական գրքեր, խաղեր, սյառներ, մանկավարժական աշխատություններ և այլն։ 1913 թ. «Հասկեր»-ը անցնում է այդ ընկերությանը և արդեն պաշտոնական խմբագիր է հաստատվում Ստ. Լիսիցյանը։

Լիսիցյանը չափազանց մեծ դեր կատարեց մանկական գրականության զարգացման ասպարեզում։ Նա ամեն կերպ խրախուսում էր երիտասարդ գրողներին, նրանց առաջ քաշում, հրատարակում նրանց գործերը։ Այսպես, 1909 թ. «Հասկեր»-ում լույս է տեսնում հետագայում հայտնի մանկական գրող, հայոց լեզվի դասագրքերի հեղինակ Հ. Հայրապետյանի «Գարուն» բանաստեղծությունը. դա թույլ գործ էր, բայց Լիսիցյանը Հ. Հայրապետյանի մեջ տեսնում էր ապագա մանկական գրողին և ոգևորում նրան՝ գրելով. «Շնորհավորում եմ, շատ լավ ոտանավոր է։ Շնորհք ունես մանուկների համար գրելու։ Շարունակիր, ամեն ամիս մի բան ուղարկիր»²։

«Հասկեր»-ը իր մակարդակով ետ չէր մնում ռուսական ու եվրոպական լավագույն մանկական ամսագրերից։ Չնայած մեզ մոտ XIX դարի վերջին և XX դարի սկզբներին հրատարակվում էին «Աղբյուր» ամսագիրը Թիֆլիսում և «Բուրաստան մանկաց» երկշաբաթաթերթը՝ Կ. Պոլսում և այլ մանկական թերթեր, այնուամենայնիվ, «Հասկեր»-ը հանդիսանում է առաջին իսկական մանկական ամսագիրը։

Լիսիցյանի բազմակողմանի գործունեության մեջ չափազանց կարևոր տեղ են գրավում մանկավարժության բնագավառում կատարած նրա աշխատանքները։ Շուրջ 60 տարի նա գործեց այդ ասպարեզում, կազմեց դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, ծրագրեր, գրեց մանկավարժական բնույթի բազմաթիվ աշխատություններ։ Նորագույն մանկավարժական սիստեմներին ծանոթանալու համար Լիսիցյանը եղավ Ռուսաստանում, Շվեյցարիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում։ Հատկապես վերջին ուղևորության ժամանակ, 1911 թ., նա մի տարի մնում է արտասահմանում և, ինչպես պարզվում է նրա արխիվում պահպանված տետրերի գրառումներից, հանգամանորեն ուսումնասիրում դպրոցական աշխատանքների դրվածքը։ Որպեսզի իր մանկավարժական սկզբունքները ավելի մեծ չափով իրագործի, նա իր կնոջ՝ Ն. Լիսիցյանի տարական դպրոցը 1911 թ. վեր է ածում պրոգիմնազիայի, ապա գիմնազիայի, որի դիրեկտորը դառնում է ինքը։ 1917 թ. հետո այն վերանվանվեց առաջին հայկական գիմնազիայի և դարձավ «Ընտանիքի և դպրոցի միության» ծնողական ընկերության սեփականությունը։ Դիրեկտորը դարձյալ Ստ. Լիսիցյանն

1 Ստ. Լիսիցյան, Ազատություն, Թիֆլիս, 1913, էջ 1։

2 Հ. Հայրապետյան, Երկերի ժողովածու, հատ. 1, Երևան, 1964, էջ 4։

էր՝ մինչև 1924 թ., երբ դպրոցը լուծարքի ենթարկվեց: 1924 թ. Լիսիցյանը փոխադրվում է Երևան և նշանակվում համալսարանի դասախոս, միաժամանակ դասավանդելով Երևանի կուսակցական դպրոցում, իսկ 1938 թ.՝ նաև հայկական մանկավարժական ինստիտուտում:

Ստեփան Լիսիցյանի մանկավարժական բնույթի առաջին հոգվածը կրում էր «Անհատականության սկզբունքը մանկավարժության մեջ» խորագիրը՝ մեկնադրավ է Ստ. Լիսիցյանի «Կյանքն ու դպրոցը»³ թղթակցությունը, որը նրավիրված է րնտանիքի, միջավայրի և դպրոցի փոխհարաբերության հարցին: 1893 թ. Թիֆլիսում կազմակերպված խոհարարների անդրանիկ դասընթացի կապակցությամբ Լիսիցյանը դրում է. «Արդյոք շուտով կգա՞ այն ժամանակը, երբ մեր ծխական դպրոցներում ևս հայ աղջիկը նախ և առաջ կսովորի այն, ինչ որ նրան անհրաժեշտ է կյանքի մեջ: Պարոններ, բացեք ուրեմն վերջապես դպրոցի դռները կյանքի համար»⁴: Լիսիցյանը մեծ նշանակություն էր տալիս դպրոցի և ծնողների կապին: «Ծնողական շրջաններ»⁶ հոգվածում նա ընդգրծում է այն միտքը, որ ծնողները սերտ կապ պետք է պահպանեն դպրոցի հետ, օգնեն նրան էքսկուրսիաներ կազմակերպելու, դպրոցի գրադարանը հարստացնելու, գրական-երաժշտական երեկոներ կազմակերպելու և այլ գործերի մեջ: Եվ այդ բոլորն իրագործվում էր Լիսիցյան գիմնազիայում. այնտեղ գոյություն ուներ ծնողական խորհուրդ, որը մեծ օգնություն էր ցույց տալիս դպրոցին, օգնում ձեռք բերելու արհեստանոցների կահավորանքը, նպաստում գրադարանի հարստացմանը, ներկա էր լինում մանկավարժական խորհրդի նիստերին և այլն:

Ծնողներին մանկավարժական գիտելիքներով զինելու նպատակով Լիսիցյանը «Հասկեր»-ին կից հրատարակում է «Մանկավարժական գրադարան» խորագրով մատենաշարը, ուր տպագրում է ուսական և եվրոպական լավագույն մանկավարժների գործերը: Հրատարակված է ընդամենը 26 գիրք, որի մի մասը ինքն էր թարգմանել:

1907 թ. Լիսիցյանը Հ. Թումանյանի և Լ. Շանթի հետ միասին կազմում և հրատարակում է հայոց լեզվի «Լուսաբեր» խորագրով դասագրքերը՝ I—V դասարանների համար: «Լուսաբեր»-ը մանկավարժական տեսակետից կուռ կառուցվածքով մի հիանալի դասագիրք էր, որտեղ զետեղված նյութերի զեղարվեստական բարձր մակարդակի և հատկապես փայլուն լեզուն մինչև այժմ էլ մնում է չգերազանցված: «Լուսաբեր»-ը ունեցավ տասնյակ հրատարակություններ. այն վերածվեց նաև արևմտահայերենի և մի քանի անգամ տպագրվեց Կ. Պոլսում: Հրատարակվել է նաև «Լուսաբեր»-ի ուղեցույց, որը մի մեթոդական ձեռնարկ է «Լուսաբեր»-ից օգտվելու համար: Բացի դրանից, Լիսիցյանը սիստեմատիկաբար զեկուցումներ և զրույցներ էր կազմակերպում դասատուների համար, թե ինչպես պետք է օգտագործել «Լուսաբեր»-ը: «Լուսաբեր»-ը ընդունվեց և տարածվեց ամենուր, դառնալով հայկական դպրոցների զրեկն միակ դասագիրքը մինչև 1922 թ., երբ դպրոցական ծրագրերը փոփոխվեցին:

³ «Տարազ», Թիֆլիս, 1893, № 6:

⁴ «Հասկեր», 1905, № 1:

⁵ «Տարազ», 1893, № 3, էջ 35:

⁶ «Հասկեր», 1905, № 3—4:

Ստեփան Լիսիցյանի անմիջական մասնակցությամբ են կազմվել հայկական դպրոցների ծրագրերը, որոնք ուժի մեջ էին մինչև խորհրդային կարգերի հաստատումը Անդրկովկասում, իսկ պատմության և աշխարհագրության ծրագրերը Լիսիցյանն է կազմել։ Որպեսզի իրեն ամբողջովին նվիրի գիմնազիայի աշխատանքներին, նա հրաժարվում է ներսիսյան դպրոցից՝

Գիմնազիայում Լիսիցյանը կիրառում է իր առաջավոր մանկավարժական հայացքները։ Ի՞նչպե՞ս այդ գիմնազիան ևրկսեռ էր, չնայած որ նման ուսումնական հաստատությունները Անդրկովկասում դեռևս լայն տարածում չէին գտել։ Դասավանդման ընթացքում մեծ տեղ էր հատկացվում պրակտիկ-ցուցադրական աշխատանքներին, որոնք նպաստում էին անցած նյութի յուրացմանը և ամրապնդմանը։

Լիսիցյան դպրոցում մեծ տեղ էր հատկացվում աշխատանքային դաստիարակությանը. դպրոցն ուներ իր արհեստանոցները, ուր աշակերտները անցնում էին արտադրական պրակտիկա։ Ուսուցումը ավելի արդյունավետ դարձնելու համար ամեն դասարանում 25 հոգուց ավելի աշակերտներ չէին ընդունում։ Դպրոցը ապահովված էր բարձրորակ ուսուցիչներով։

Դպրոցում աշակերտներին տալիս էին բազմալեզու և հիմնավոր կրթություն. հատկապես բարձր մակարդակի վրա էր գտնվում լեզուների, գրականության ու պատմության ուսուցումը։ Լիսիցյան գիմնազիան իրավունք էր տալիս ավարտողներին առանց քննության համալսարան ընդունվելու։

Ստեփան Լիսիցյանի մանկավարժական հայացքները ամփոփված են նրա մի շարք հոդվածներում և աշխատություններում. դրանցից են՝ «Ռեալիստական Պատկանյանի երկերի բարոյական կրթիչ նշանակությունը»⁹, «Կոստանդնուպոլսի թաղային վարժարանները»¹⁰, «Գավառագիտության կազմակերպման խնդիրները և դպրոցը»¹¹, «Ինչպես դիտել ձնաշերտերը, փոթորիկները, ջրի սառցակալվելն ու բացվելը»¹² և այլն։

Լիսիցյանը հիանալի դասախոս էր, նա գիտեր գրավել լսարանը, ուկնդիրները կլանված էին նրան լսում և չէին նկատում, թե ինչպես է անցնում ժամանակը։ Նա սովորողների մեջ ներարկում էր հայրենասիրություն, ժողովրդագասիրություն, սեր դեպի մարդը։

Ձգալի է Ստեփան Լիսիցյանի վաստակը գրականագիտության ասպարեզում։ Դեռ XIX դարի վերջին նա հանդես է գալիս գրականության վերաբերյալ մի քանի աշխատություններով։ «Հայոց գրականություն և կյանք» փոքր, բայց ուշագրավ հոդվածում¹³ նա առաջարկում է ստեղծել հասարակական վեպ և հասարակական երկ։ Լիսիցյանը մի ընդարձակ ուսումնասիրություն է գրում «Ռուսաց գրականության ուղղությունները XVIII դարում և XIX դարի սկզբին»¹⁴ խորադրով, ուր հանդամանորեն վերլուծում է Լոմոնոսովի, Դերժավինի, Կարամզինի, Պուշկինի, Գոգոլի դրական վաստակը։ Ա. Ս. Պուշ-

7 Ս. Լիսիցյանի արխիվ։

8 Е. Лисицян, Мои воспоминания, Երևան, 1955, ձեռագիր, էջ 80։

9 «Տարազ», 1892, № 42։

10 «Նոր դպրոց», Քիֆլիս, 1908, № 2։

11 «Ժողովրդական լուսավորություն», Երևան, 1928, № 9։

12 Նույն տեղում, № 10—12։

13 «Տարազ», 1893, № 2։

14 «Մուրճ», Քիֆլիս, 1889, № 4—5, 6։

ների, Լիսիցյանը դիտական և զեղարվեստական բարձր մակարդակով է կատարում իր բոլոր թարգմանությունները:

Ստեփան Լիսիցյանը ոչ միայն աչքի ընկնող դիտական էր, այլև խոշոր հասարակական գործիչ: Նրա խառնվածքն այնպիսին էր, որ նա չէր կարող չենտվել հասարակական-քաղաքական կյանքի հորձանուտը և իր խոսքը շասեյ հասարակությանը հուզող հարցերի առթիվ: Գեռես ուսանողական տարիներին նա ծավալում է ակտիվ հասարակական գործունեություն: «Տարադ»-ում նա տպագրում է շուրջ 30 հոդված հասարակությանը հուզող հարցերի շուրջ: Այսպես, «Հայոց զրականությունը և կյանքը» հոդվածում նա նշում է, որ եթե մինչև այժմ մեր գրողների հիմնական թեման սերն է եղել, ապա ժամանակն է, որ կյանքը իր բոլոր կողմերով արտացոլվի զրականության մեջ: «Հրատարակչության գործը մեզ մոտ» հոդվածում նա իր ծրագիրն է առաջարկում հրատարակչական գործը բարելավելու համար, իսկ «Ժողովրդական թատրոն» թղթակցությունում (1893 թ.) առաջ է քաշում ժողովրդական թատրոն ստեղծելու հարցը: Գրողներին օգնելու, նրանց բարոյապես և նյութապես խրախուսելու հարցերին է նվիրված Լիսիցյանի «Բարերարությունից զրկվածները» հոդվածը: «Թշնամական դրացիություն» հոդվածում կոչ է անում վերջ տալ հարևան ժողովուրդների մեջ սերմանվող թշնամանքին, գրելով. «Այդ ցավալի և միանգամայն վնասակար է մեր երկրի տնտեսական առաջադիմության համար»²²:

1892 թ. դեկտեմբերին մահացած Գ. Արծրունու թաղումը, ինչպես հայտնի է, վերածվեց ցարիզմի դեմ ուղղված բողոքի ցույցի: Կովկասի փոխարքա Գոլիցինի կարգադրությամբ թաղման թափորը չպետք է անցներ Գոլովինսկի փողոցով, որտեղ գտնվում էր փոխարքայի պալատը, այլ՝ Լորիս-Մելիքովի փողոցով: Սակայն Ս. Լիսիցյանի և Գ. Միրոյանի զրդմամբ թափորը անցնում է Գոլովինսկի փողոցով: Գերեզմանատանը Լիսիցյանը հանդես է գալիս մի զեղեցիկ ճառով: Նույն օրը Լրեկոյան նա ձերբակալվում է և բանտարկվում Մեփոնում:

Լիսիցյանը մեծ դեր է կատարել «Կովկասի հայոց բարեգործական ընկերություն»-ում, ուր մեծապես նպաստել է ընկերության գործունեությանը և մասնավորապես նրա զրադարանի հարստացմանը:

Ստ. Լիսիցյանը մեծ դեր է կատարել որպես հրատարակչական գործի կազմակերպիչ: Նրբ 1903 թ. Գոլիցինի հրամանով փակվում է Հայոց հրատարակչական ընկերությունը, Լիսիցյանը հիմնադրում է «Ս. Լիսիցյան և ընկ.» մասնավոր հրատարակչական ֆիրման, որը մեծ գործունեություն է ծավալում: Այդ ընկերությունը հրատարակեց Ստ. Շահումյանի թարգմանությամբ Կ. Մարքսի «Վարձու աշխատանք և կապիտալ» գրքույկը, Վոյնիչի «Բոռը», Զոմբարդի «Ինչու այժմ մարդ հետաքրքրվում է քաղաքա-տնտեսական և ընկերավարչական խնդիրներով» և բազմաթիվ այլ աշխատություններ: 1905 թ. հեղափոխությունից հետո Լիսիցյանը վերստեղծում է Հայոց հրատարակչական ընկերությունը և իր հաստատության գույքը զրամական միջոցներով հանդերձ տրամադրում նրան: Տպագրական գործը բարելավելու նպատակով Լիսիցյանը հիմնում է «Հերմես» ընկերությունը, որը շատ կարևոր դեր խաղաց հրատարակչական գործում:

²² «Տարադ», 1893, № 6:

1913 թ. Լիսիցյանը Հ. Թումանյանի, Գ. Ազանյանի, Ս. Տեր-Ավետիսյանի և Ա. Շահնազարյանի հետ համատեղ կազմակերպում է հայոց պատմական և հնագիտական բնկերությունը, հրատարակում այդ բնկերության կանոնադրությունը և բավական աշխատանք ծավալում այդ ուղղությամբ: Ընկերության նպատակն էր ժողովել և ուսումնասիրել հայոց պատմության և հնագիտության վերաբերյալ ամեն տեսակ նյութեր: Ընկերությանն իրավունք էր վերապահվում գիտական արշավանքներ կազմակերպել, պատմական նյութեր հավաքել: Սովետական շրջանում Ստեփան Լիսիցյանը մեծ աշխատանք է կատարում զավառագիտությունը կազմակերպելու ուղղությամբ: «Գավառագիտական շարժումը Ռուսաստանում և մեզ մոտ» հոդվածում²³ նա առաջ է քաշում մի ծրագիր այդ աշխատանքները կազմակերպելու համար և ինքն անձամբ մի քանի շրջաններում կազմակերպում զավառագիտական ընկերություններ:

Մեծ է Ստեփան Լիսիցյանի վաստակը ազգագրության ասպարեզում:

Լիսիցյանը ազգագրությամբ սկսել է զբաղվել դեռևս XIX դարի վերջից. սակայն XX դարի 20-ական թթ. նա իրեն զբեթե ամբողջությամբ նվիրում է հայ ազգագրությանը և դառնում սովետահայ ազգագրական դպրոցի հիմնադիրը: Իր ուսումնասիրությունների մեջ Լիսիցյանը մեծ տեղ էր հատկացնում հայկական բնակարանի ուսումնասիրությանը: 1925 թ. հունիսի 21-ին նա Կովկասի պատմահնագիտական ինստիտուտի գիտնականների ժողովում զեկուցում է հայկական գյուղական բնակարանների ուսումնասիրման հարցի մասին. զեկուցումը մեծ հետաքրքրություն է առաջ բերում և տպագրվում է ինստիտուտի «Տեղեկագրում»²⁴: Հոգվածը նվիրված էր գլխատան ուսումնասիրությանը Ղարաբաղում: Տրվում էր գլխատան նկարագրությունը, տարածման շրջանները, նրա աղբյուր ժամատան հետ և այլն: Նույն ինստիտուտում Լիսիցյանը զեկուցում է Բարձր Հայքի գյուղական բնակարանների մասին²⁵, հանդամանորեն նկարագրելով այդտեղի տները իրենց ամբողջ կոմպլեքսով հանդերձ՝ տուն, գոմ, ախոռ, դրսի օդա և այլն: Լիսիցյանը լուծում է նրանց ծագման հետ կապված որոշ հարցեր, ինչպես նաև կանգ է առնում ժողովրդական տների և եկեղեցական ճարտարապետության կապի վրա: Բնակարանների ուսումնասիրությանն է նվիրված նաև նրա մյուս հոդվածը՝ «Հայաստանի բնակարանների ուսումնասիրության նյութերից»²⁶, ուր քննարկվում են Մեղրու, Նոր-Բայազետի և հատկապես Փամբակի ու Գարալագյազի գյուղական տները: 1927 թ. լույս է տեսնում Լիսիցյանի մի շատ հետաքրքիր հոդվածը, որը վերնագրված է՝ «Շատախի պատմա-ազգագրական ուրվագծերը»²⁷ և տալիս է Շատախի աշխարհադրական դիրքը, վարչական բաժանումը, կանգ առնելով էմիրների, մելիքների գործունեության վրա և այլն: Այդտեղ Լիսիցյանն առաջին անգամ հայ ազգագրության մեջ արժարժում է հայերի մոտ գոյություն ունեցող «նորայրական միությունների» (հասակակիցների միություն) հարցը: Վերահիշյալ հոդվածները բարձր գնահատվեցին՝ Ի. Գորգիևի գրախոսականում²⁸:

²³ «Խորհրդային Հայաստան», 1921, № 192:

²⁴ «К изучению армянских крестьянских жилищ». «Известия Кавказского историко-археологического института», т. III, Тифлис, 1925.

²⁵ «Крестьянские жилища Высокой Армении». Там же, т. IV, Тифлис, 1927.

²⁶ Նույն տեղում, հատ. VI:

²⁷ Նույն տեղում, հատ. V:

²⁸ Տե՛ս «Бюллетень КИАИ», № 3, 1927.

Ուշագրավ է Լիսիցյանի «Սրբավայրերը լեռնանցքներում»²⁹ հոդվածը, որը նրվիրված է Հայաստանի լեռնանցքներում գոյություն ունեցող սրբավայրերին և վերլուծության է ենթարկում այդտեղ կատարվող սովորությունները, բացահայտում նրանց ակունքները, որոնք տանում են դեպի հեթանոսական շրջան և կապվում են լեռների ոգիների, կրակի և ջրի պաշտամունքի հետ:

1936 թ. լույս է տեսնում Լիսիցյանի «Հայ ազգագրությունը 15 տարում»³⁰ հոդվածը, որտեղ նա կանգ է առնում այն նվաճումների վրա, որ ձեռք է բերել սովետահայ ազգագրությունը 15 տարիների ընթացքում, տալիս է Ն. Լալայանի, Դ. Զուրսինի, Ի. Պետրուշևսկու, Խ. Սամվելյանի աշխատանքների վերլուծություն: Միաժամանակ նա նշում է ազգագրական գիտության թույլ զարգացումը Հայաստանում, գիտական կադրերի պակասը, հավաքչական աշխատանքների անբավարարությունը, Երևանի համալսարանում ազգագրական ամբիոնի բացակայությունը և այլն:

Ստեփան Լիսիցյանի լավագույն գործերից մեկը «Ուրվագծեր նախառնույունցիոն Հայաստանի ազգագրության» աշխատությունն է, որը լույս տեսավ հեղինակի մահից հետո «Կովկասի ազգագրական ժողովածու»-ում³¹:

Ազգագրական նյութերի հավաքումը ավելի սիստեմատիկ դարձնելու և գիտական հիմունքների վրա դնելու նպատակով Լիսիցյանը ձեռնամուխ է լինում «Ազգագրական հարցարան» կազմելու աշխատանքներին, որի կարիքը շափազանց մեծ էր: Գ. Խալաթյանի կազմած հարցարանը, որը լույս էր տեսել 1887 թ., իր բնույթով արդեն չէր կարող բավարարել նոր պահանջներին: Լիսիցյանի «Ազգագրական հարցարան»-ը լույս տեսավ 1946 թ.: Դա համակողմանիորեն կազմված ընդարձակ հարցարան էր՝ հետևյալ բաժիններով. տրնտեսական կենցաղ, նյութական մշակույթ, սոցիալ-տնտեսական հարաբերություններ, հավատալիքներ, տոներ, լեզու և գիր, ժամանց, ժողովրդական բանահյուսություն, արվեստ: Հարցարանը ուներ նաև գործնական ցուցումներ նյութեր հավաքողների համար, որտեղ տրվում էին անհրաժեշտ տեղեկություններ, թե ինչպես պետք է հավաքել ազգագրական նյութերը: Հարցարանը այնքան լավ էր կազմված, հանգամանալից, գիտական սկզբունքներով, որ, ինչպես ճիշտ նկատել է պրոֆ. Հ. Կուսիկյանը, եթե այն համապատասխանեցրած չլիներ Հայաստանի պայմաններին՝ կարելի կլիներ թարգմանել այլ լեզուներով³²: Հարցարանի լույս ընծայումը խթանեց ազգագրական նյութերի հավաքման աշխատանքներին, և այդ հարցարանով այժմ առաջնորդվում են ոչ միայն մեր ազգագրագետները, այլև հարյուրավոր ուսուցիչներ և ուսանողներ, որոնք ազգագրական նյութեր են հավաքում:

Լիսիցյանը խոշոր աշխատանք կատարեց ազգագրական նյութերի հավաքման ասպարեզում: Դեռևս 1924 թ. Անդրկովկասյան գիտական ասոցիացիայի արշավախումբը Ստ. Լիսիցյանի, Գ. Զուրսինի և Լազոյի մասնակցությամբ ազգագրական ուսումնասիրություններ էր կատարում Լեռնային Ղարաբաղում, Զանգեզուրում և Լեռնային Քրդստանում: Կովկասի պատմա-հնագիտական

29 «Советская этнография», № 4—5, 1936.

30 Նույն տեղում:

31 «Труды Института этнографии», новая серия, т. XXVI, М., 1955.

32 «Советская этнография», № 1, 1948.

ինստիտուտի հանձնարարությամբ Լիսիցյանը 1927 թ. ազդագրական նյութեր էր հավաքում Մեղրիի, իսկ 1928 թ.՝ Ազուլիսի շրջաններում:

1928 թ. նոյեմբերի 1-ին Լիսիցյանը նշանակվում է Պետական պատմական թանգարանի ազդագրական բաժնի վարիչ և նրա գործունեությունը թևակոխում է զարգացման մի նոր շրջան: Նա եռանդուն կերպով ձեռնամուխ է լինում ազգագրական նյութերի հավաքմանը, սկզբում մենակ, ապա արշավախմբերի գլուխ անցած շատ արժեքավոր նյութեր է ձեռք բերում Զանգեզուրում (1931), Մեղրիում (1932), Լոռի-Ղազախում (1934), Ախալցխայի և Ախալքալաքի շրջաններում (1936), Նոր-Բայազետի շրջանում (1938), Եղվարդի ենթաշրջանում (1946) և այլ վայրերում: Այդ ժամանակաշրջանում Լիսիցյանը գրի է առնում հսկայական ազդագրական նյութ և միաժամանակ թանգարանի համար հայթայթում շուրջ 1000 Լքսպոնատ, որոնց մեջ կարևոր տեղ են գրավում ոսկերչական, զինագործական, կավագործական գործիքների հազվագյուտ կոմպլեքսներ և բազմաթիվ այլ իրեր: Ազգագրական նյութեր հավաքելու նպատակով Լիսիցյանը բազմաթիվ նամակներ է գրում և հարցաթերթիկներով հանդերձ ուղարկում Հայաստանի շրջանները, Ադրբեջանի ու Վրաստանի հայաբնակ վայրերը և ստանում պատասխաններ: Իրանց մի մասն այժմ գտնվում է հանգուցյալի արխիվում: Լիսիցյանը գիտական արշավախմբերի աշխատանքների արդյունքների մասին հանդես է եկել մամուլում³³, նյութերի հավաքման և ուսումնասիրության գծով կատարված երկարամյա աշխատանքների արդյունքները ամփոփված են նրա Լրեք առավել նշանակալից աշխատություններում, որոնք դժբախտաբար դեռ հրատարակված չեն: Իրանց մեջ բացառիկ տեղ է գրավում «Զանգեզուրի հայերը» կապիտալ աշխատությունը, որն այժմ պատրաստվում է հրատարակության, ինչպես նաև «Վարարադի հայերը», «Զոկական խմբի հայերի ազգագրական նկարագրությունը» դործերը, գիտական արշավախմբերի ժամանակ հավաքած բազմաթիվ ազգագրական նյութերը և այլն:

Ստ. Լիսիցյանը, Ն. Շահագիրզի հետ միասին, մեծ դեր կատարեց նաև Երևանի պատմության թանգարանի ստեղծման գործում՝ իր պատկառելի լուծման մոծելով Հայաստանում թանգարանային գործի կազմակերպման ասպարեզում:

Ստ. Լիսիցյանը ոչ միայն ազգագրագետ էր, պատմաբան, մանկավարժ, բանասեր, այլև բազմափաստակ աշխարհադրագետ: Նրա դրչին են պատկանում աշխարհագրական բնույթի բազմաթիվ աշխատություններ, որոնց մեջ կարևոր տեղ է գրավում «ՀՍԽՀ ֆիզիկական աշխարհագրություն»³⁴ արժեքավոր մենագրությունը: Մինչև այս դրքի լույս տեսնելը Հայաստանի ֆիզիկական աշխարհագրության վերաբերյալ չկար մի ամփոփ աշխատություն, և այս հետազոտությունը, որը հանդիսանում է հեղինակի երկար տարիների աշխատանքի արդյունք, լրացնում էր այդ բացը: Ուսումնասիրությունը գրված է գիտական սեղմ ոճով, օգտագործված են և՛ հայ, և՛ օտար բոլոր աղբյուրները, ինքն անձամբ եղել է Հայաստանի բոլոր շրջաններում և շրջագայությունների ժամանակ հավաքել անհրաժեշտ նյութեր, ճշտել տեղավայրերը և այլն: Գրքում հանդամանորեն ուսումնասիրված են Սովետական Հայաստանի տեղա-

³³ Տե՛ս, Երևան, «Խորհրդային Հայաստան», № 209, 1935:

³⁴ «ՀՍԽՀ ֆիզիկական աշխարհագրություն», Երևան, 1940:

դրությունը, կլիման, հիդրոգրաֆիան, հողերը, բուսականությունը, կենդանական աշխարհը, բնակչությունը և վարչական բաժանումը: Մասնագետները բարձր գնահատեցին վերոհիշյալ աշխատությունը և միաժամանակ առաջարկեցին այն թարգմանել ռուսերեն³⁵:

Ուշագրավ են Լիսիցյանի պատմա-աշխարհագրական բնույթի աշխատությունները: «Պոմպեոսի ուղին Անդրկովկասում»³⁶ հոդվածում հեղինակը հանգամանորեն ճշգրտում է ճակատամարտի վայրերը և հակադրվելով Հ. Մանանդյանի ու Մոմզենի կարծիքին, գծում է Պոմպեոսի անցած ուղին Անդրկովկասում: «Կիմերական ներարշավի ուղին Անդրկովկասում»³⁷ հոդվածում նա հանգամանորեն քննարկում է կիմերների արշավի ուղին Անդրկովկասում և գտնում, որ կիմերների ներխուժումը Անդրկովկաս կատարվել է Կասպից ծովի ափերով:

Մեծ էր Ստ. Լիսիցյանի դերը գիտական կադրեր պատրաստելու գործում: Լինելով Երևանի պետական համալսարանի ֆիզիկական աշխարհագրությանամբիոնի վարիչ և Հայաստանի ֆիզիկական աշխարհագրության ու ազգագրության դասախոս, նա ղեկավարում էր մի շարք ասպիրանտների աշխատանքները՝ հայ ազգագրության, Հայաստանի և Անդրկովկասի աշխարհագրության, Հայաստանի պատմական աշխարհագրության մասնագիտությունների գծով: Նրա ասպիրանտներից շատերը արդեն գիտության դոկտորներ և թեկնածուներ են:

Սովետական Հայաստանի կառավարությունը, բարձր գնահատելով Ստեփան Լիսիցյանի վաստակը, 1945 թ. նրան շնորհում է գիտության վաստակավոր գործչի կոչում: Նույն տարվա հոկտեմբերին հանդիսավորությամբ նշվում է նրա ծննդյան 80 և գիտա-մանկավարժական գործունեության 60-ամյակը: Այդ կապակցությամբ Լիսիցյանը պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով:

Ստեփան Լիսիցյանը մահացավ 1947 թ. հունվարի 4-ին՝ 82 տարեկան հասակում: Սովետական Հայաստանի կառավարությունը նրա հիշատակը հավերժացնելու նպատակով Հայաստանի պատմության թանգարանի ազգագրական բաժինը և Երևանի № 34 դպրոցը կոչեց նրա անվամբ:

Զգալի են Ստ. Լիսիցյանի մատուցած ծառայությունները հայագիտության տարբեր բնագավառներին: Ավելի քան 60 տարի նա անխոնջ կերպով աշխատեց այդ ասպարեզում: Նրա գիտական աշխատությունները Հայաստանի ազգագրության, աշխարհագրության, պատմության, բանասիրության բնագավառում վաղուց ի վեր իրենց արժանի տեղն են գտել հայագիտության ոսկյա ֆոնդում: Նա հիմնեց սովետահայ ազգագրությունը: Նրա ստեղծած «Հասկեր» ամսագիրը կարևոր դեր խաղաց մանկական գրականության զարգացման գործում: Մեծ են նրա ծառայությունները հայ հոգևոր ու նյութական մշակույթի հավաքման և ուսումնասիրման ասպարեզում: Ահա թե ինչու այսօր մեր գիտական հասարակայնությունը ջերմորեն նշում է Ստեփան Լիսիցյանի ծննդյան 100-ամյակը:

35 Ա. Շ. Աթանասյան, ՀՍՍՌ ֆիզիկական աշխարհագրություն, «Սովետական մանկավարժ», № 3, 1941 և այլն:

36 «Երևանի պետ. համալսարանի գիտական աշխատություններ», № 23, 1946:

37 Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), № 1, 1947:

СТЕПАН ЛИСИЦИАН

(К 100-летию со дня рождения)

К. В. МЕЛІК-ПАШАЯН

(Р е з ю м е)

Известный армянский педагог, общественный деятель и ученый Степан Данилович Лисициан родился в Тифлисе 22 сентября 1864 г., в семье врача. В 1889 г. он окончил историко-филологический факультет Варшавского университета. С 1889 г. преподавал в Эчмиадзинской духовной академии, откуда был уволен в 1891 г. по обвинению в организации выступления студентов против администрации академии. В 1894—1915 гг. Лисициан преподает исторические дисциплины в Тифлисской школе Нерсисян, а в 1911—1924 гг. является директором гимназии Е. Х. Лисициан, реорганизованной в первые годы Советской власти в техникум. В 1905—1922 гг. Лисициан со своей женой Е. Х. Лисициан издает и редактирует журнал для детей «Аскер» («Колосья»), сыгравший важную роль в развитии армянской детской литературы. В 1907—1923 гг. он совместно с Ов. Туманяном и Л. Шантом составляет и издает «Букварь» и учебники армянского языка и литературы, которые считались одними из лучших учебников армянской школы. В 1924 г. переехав в Ереван, Лисициан читает лекции в Ереванском государственном университете по исторической и физической географии Армении и по этнографии, одновременно руководя кафедрой физической географии. С 1928 г. и до конца жизни он заведовал этнографическим отделом Государственного исторического музея Армении, носящего ныне его имя.

Лисициан возглавлял этнографические экспедиции в Мегри, Агулис, Нор-Баязет, Зангезур, Ахалцих, Ахалкалаки, Нагорный Карабах и другие места. На основании полевого материала написаны его ценные работы «Армяне Зангезура», «Армяне Карабаха» и другие. Перу Лисициана принадлежит около 200 работ по разным отраслям науки и культуры, а также ценные переводы («Камо грядеши» Г. Сенкевича, «Дарвин и его время» Тимирязева и др.).

С. Д. Лисициану было присвоено звание заслуженного деятеля науки Арм. ССР. Он был награжден орденом Трудового Красного Знамени и медалями.